«Հաստատում եմ»

ԵՊՀ պրոռեկտոր,

Ռ. Հ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ

ԿԱՐԾԻՔ

Արմեն Հոկտեմբերի Ասատրյանի՝ «Հայ առաքելական եկեղեցու վիրահայոց թեմը խորհրդային տարիներին (1921-1991 թթ.)» Է.00.01 - «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Հաստատված է ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի 2026 թ. փետրվարի 9-ի նիստում (արձանագրություն թիվ 8) նիստին մասնակցում էին Է. Գ. Մինասյանը, Հ. Բ. Գրիգորյանը, Ա. Ն. Հայրունին, Հ. Ժ. Հովհաննիսյանը, Վ. Ա. Հակոբյանը, Կ. Ա. Եղիազարյանը, Տ. Կ. Գևորգյանը, Տ. Հ. Ղանալանյանը և ուրիշներ:

Խորհրդային ժամանակաշրջանի պատմությունը վերջին տասնամյակներին արժանանում է անբավարար ուշադրության: Առավել ևս, խիստ սահմանափակ է ՀԽՍՀ-ից դուրս ԽՍՀՄ հայության պատմության խնդիրների նկատմամբ հետաքրքրությունը: Եթե Խորհրդային Հայաստանում Հայ առաքելական եկեղեցու պատմությունը, հատկապես առաջին մի քանի տասնամյակներին, մեծի մասամբ լուսաբանվել է մի շարք հետազոտություններով, ապա այլ հանրապետություններում գործող թեմերի պատմությունը կարոտ է գիտական ուսումնասիրության: Վիրահայոց թեմի պատմությունը 1921-1991 թթ., երբևէ չի հանդիսացել առանձին հետազոտության առարկա: Հենց այս ժամանակ են Հայ առաքելական եկեղեցուց խլվել մի շարք հայկական եկեղեցիներ, որոնց մի մասն արդեն անկախության շրջանում յուրացվել է Վրաց ուղղափառ եկեղեցու կողմից: Ուստի բացի գիտականից սույն խնդրի լուծումն ունի նաև հասարակական հնչեղություն և արդիականություն:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից ու հավելվածներից: Ընդհանուր ծավալը 161 էջ է:

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ մեջ ներկայացված է թեմայի **արդիականությունը.** Ատենախոսն իրավացիորեն նշում է, որ Վրաստանի, մասնավորապես Թբիլիսի հայկական մշակութային ժառանգությունը, դրա ներկայիս անորոշ կարգավիճակը չափազանց արդիական է դարձնում խորհրդային ժամանակաշրջանում Վիրահայոց թեմի պատմության ուսումնասիրությունը:

Ատենախոսության **գիտական նորույթը**՝ գնահատելի է մի քանի առումներով. հեղինակը՝

ա) առաջին անգամ համակողմանիորեն ներկայացնում է Վիրահայոց թեմի գործունեությունը 1921-1991 թթ.,

բ. քննարկում Հայ առաքելական եկեղեցու հարաբերությունները Վրաց ուղղափառ եկեղեցու հետ խորհրդային ժամանակաշրջանում,

գ. մեծաթիվ փաստարկներով ներկայացնում Վրաստանի ու հատկապես Թիֆլիսի հայկական եկեղեցիների օտարումը,

դ. լուսաբանում Հայ առաքելական եկեղեցու հանդեպ հակաեկեղեցական պայքարը Վրաստանում:

Ատենախոսության մեջ առաջին անգամ շրջանառության մեջ են դրվել դեռևս չհրատարակված արխիվային սկզբնաղբյուրներ: Հատկապես արժեքավոր են նախապատերազմական շրջանին վերաբերող փաստաթղթերը, որոնք օգնում են համակողմանի պատկերացում կազմել Վիրահայոց թեմի ներքին խնդիրների ու արտաքին մարտահրավերներին դիմագրավելու փորձերի մասին:

Առաջին գլխում, որը վերնագրված է «Վիրահայոց թեմը խորհրդային իշխանության առաջին տարիներին (1921-1938 թթ.)», Ա. Ասատրյանը նախ անդրադառնում է Վիրահայոց թեմի համառոտ պատմությանը՝ ծանրանալով Վրաստանի դեմոկրատական հանրապետության շրջանում Հայ եկեղեցու դիմագրաված մարտահրավերների ու հայերի հանդեպ ճնշումների վրա: Դա օգնում է ավելի ամբողջական պատկերացում կազմել այն կացության մասին, որում գտնվում էր եկեղեցական կառույցը խորհրդային առաջին տարիներին: Այստեղ խոսվում է

1920-1930-ական թթ. եկեղեցիների բռնագրավումների, մարտնչող անաստվածության քարոզչության, հոգևորականների հալածանքների մասին: Արժանվույնս գնահատվում է Գևորգ արք. Չորեքչյանի գործունեությունը, ով ղեկավարելով թեմը, փորձում է նվազագույնի հասցնել կորուստները: Ներկայացվում է «Ազատ եկեղեցական եղբայրության» կործանարար նշանակությունը Վրաստանում հայ եկեղեցական կառույցները կազմալուծելու հարցում: Համեմատություններ են կատարվում Խորհրդային Հայաստանում վարվող հակաեկեղեցական քաղաքականության հետ: Խոսվում է 1930-ական թթ. ստալինյան մենիշխանության հաստատման ժամանակաշրջանում եկեղեցու հանդեպ բռնաճնշումների՝ այդ թվում Մեծ տեռորի ժամանակ հայ հոգևորականների հալածանքի մասին:

Երկրորդ գլուխը վերնագրված է «Վիրահայոց թեմի գործունեությունը 1941-1972 թթ.»: Այստեղ Ա. Ասատրյանը առաջին հերթին անդրադառնում է Հայրենական պատերազմի տարիներին Վիրահայոց թեմի գործունեությանը, որը ևս հետաքրքրություն է ներկայացնում, քանզի հաճախ խոսվում է ընդհանրապես Մայր Աթոռի, երբեմն սփյուռքահայ թեմերի, բայց ոչ «ներքին» կամ խորհրդային սփյուռքի թեմերի մասին: Գնահատելի է, որ այս ու այլ հարցերի առնչությամբ հանգամանորեն լուսաբանվում են Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ Վիրահայոց թեմի կապերը, դրանց բնույթն ու նշանակությունը:

Երկրորդ գլխի երկրորդ ենթագլուխը նվիրված է Վիրահայոց թեմի պատմությանը 1945-1972 թթ.: Հանգամանալիորեն լուսաբանվում է Վազգեն Ա-ի այցը Վրաստան 1957 թ., նրա հանդիպումներն ու ջանքերը թեմին վերադարձնել նախկինում խլված եկեղեցիները: Անդրադարձ է կատարվում նաև թեմի առաջնորդների զանազան այցելություններին:

Երրորդ գլուխը կրում է «Վիրահայոց թեմը խորհրդային վերջին երկու տասնամյակներում (1972-1991 թթ.)» վերնագիրը: Այս գլխում ներկայացվում է Վիրահայոց թեմի գործունեությունը Գևորգ եպս. Սերայդարյանի թեմակալության շրջանում: Մի շարք իրադարձությունների թվում ներկայացվում է 1978 թ. Համայն Վրաստանի նորընտիր պատրիարք-կաթողիկոս Իլյա Բ-ի այցը Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1980 թ. Վազգեն Ա-ի այցը Թբիլիսի: Այս փուլում կարծես առավել սերտ են Հայ ու Վրաց եկեղեցիների առնչությունները, հաճախակի են բազմաբնույթ այցերը:

Առանձին ենթագլխով ներկայացված են Գևորգ եպս. Սերայդարյանի օրոք Վիրահայոց թեմում կատարված եկեղեցիների վերաբացումն ու վերանորոգչական աշխատանքները: Այստեղ Ա. Ասատրյանը հանգամանորեն ներկայացնում է բոլոր եկեղեցիներում կատարված աշխատանքները:

Որպես հավելվածներ հեղինակը ներկայացնում է Վիրահայոց թեմի գործող եկեղեցիների ցանկը, մի քանի անտիպ ու արդեն իսկ տպագրված փաստաթղթեր (օր.՝ «1921 թ. հուլիսի 4-ի Վրաստանի Հայոց կոնսիստորիայի հայտարարությունը Գևորգ Ե. կաթողիկոսին՝ կոնսիստորիայի նոր անդամներ ընտրելու և նրանց հայրապետական կոնդակով օրհնելու խնդրանքով», «1923 թ. մայիսի 9-ի Գևորգ արք. Չորեքչյանի զեկուցագիրը Գևորգ Ե. Սուրենյանց կաթողիկոսին՝ Վրաստանում տիրող իրավիճակի մանրամասն տեղեկատվությամբ», «1924 թ. ապրիլի 7-ի թեմի առաջնորդի զեկուցագիրը Էջմիածնի Գերագույն Հոգևոր խորհրդին՝ պատմական և հնագիտական վանքերի վրա եկեղեցու իրավունքները պահպանելու խնդրի մասին» և այլն):

Եզրակացություններում հեղինակն ամփոփ կերպով ներկայացնում է իր հետազոտության հիմնական արդյունքները:

Անկասկած, կատարվել է դրական ու գնահատելի մեծածավալ աշխատանք, սակայն միևնույն ժամանակ ատենախոսությունում նկատելի են նաև առանձին թերություններ, որոնցից կարելի է նշել.

1. Կան ոճական անհաջող ձևակերպումներ ու վրիպակներ: Օրինակ՝ 1917 թ. Էջմիածնի ռուսահայ հոգևորականների համագումարի փոխարեն գրված է Էջմիածնի ռուսաց հոգևորականների համագումար (էջ 37): Էջ 79-ում գրված է, որ Վազգեն Ա-ն հանդիպել է Վրաստանի Հանրապետության նախագահի հետ, այնինչ պետք է լիներ Վրաստանի ԳԽ նախագահության նախագահի հետ: Գիտական հոդվածները տեղ են գտել և՛ հոդվածների բաժնում և՛ համապատասխան ամսագրերը ներկայացված են երկրորդ անգամ՝ Պարբերական մամուլի բաժնում: Համացանցային աղբյուրները տրված են սխալ. բացի հղումներից պետք է նաև գրվեին վերնագրերն ու ամսաթվերը:

2. Ցանկալի կլիներ Վիրահայոց թեմի դեմ վարվող քաղաքականությունը համեմատել Վրաստանում այլ եկեղեցիների, մասնավորապես Վրաց ուղղափառ եկեղեցու դեմ իրականացվող ճնշումների հետ, խնդիրները դիտարկել նաև ընդհանրապես միութենական գործընթացների համատեքստում:

Ամբիոնը գտնում է, որ Ա. Ասատրյանը կատարել է լուրջ և գնահատելի աշխատանք՝ հանգամանալի լուսաբանելով Հայ առաքելական եկեղեցու Վիրահայոց թեմի պատմությունը 1921-1991 թթ.: Իր ընդհանրացումները նա ի մի է բերել «**Եզրակացություններում**»՝ բյուրեղացված տեսքով:

Որոշեցին - ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնը, ելնելով վերոհիշյալից, գտնում է.

ա) Արմեն Հոկտեմբերի Ասատրյանի «Հայ առաքելական եկեղեցու վիրահայոց թեմը խորհրդային տարիներին (1921 - 1991 թթ.)» վերտառությամբ ատենախոսությունը հաջողված, պատմագիտական արժեք ունեցող ուսումնասիրությունն է, որն օգնում է ամբողջական պատկերացում կազմել Վիրահայոց թեմի 1921-1991 թթ. պատմության մասին:

բ) Ատենախոսությունը լիովին բավարարում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջները և հեղինակն էլ արժանի է իր հայցած Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

ԵՊՀ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ,
Պ.Գ.Դ., ՊՐՈՖԵՍՈՐ՝ **Է. Գ. ՄԻՆԱՍՅԱՆ**

Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Է. Գ. Մինասյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Մ. Վ. Հովհաննիսյան**
09.02.2026